Էրկու դա̈ռվուչ[20]

(Խոյի բարբառի նմուշ՝ գիտական տառադարձությամբ[21])

ըսպահան չըհա̈րի մէչը չահօղլի չահ աբ̄ասի դա̈վրին էրկու դա̈ռվուչ էն ըլէլի, տա̈հ էրկուսն էլ փա̈լա̈նգի փօստէ խօխա̈ն Թէ-վէրին, մէ ծիէռընէրը նաջաղ, մէկը քա̈չկուլ, չըհա̈րը, չառսու-բա-զառ չուռ էն իկա̈լի:

դը հա̈րի տիէս, օր տա̈նց էն մէկը կանչէլի.—յա՛ մահմուդ:

ամը էն մէկէլը կանչէլի.—յա մա̈հբուբ:

էրկըսօվ էլ հա էտիէնց կանչէլօվ չուռ էն իկա̈լի:

մէկ օր չահ աբ̄ասը վէրցէլի քառսուն խատ օսկի լըցէլի մէ լա̈նգա̈ռու միէչ, վըրա̈յէն էլ Թա̈փա̈սի դա̈րա̈ փըլավ ի լըցիէլ տա-լի, նօքա̈րին ասէլի, օր տանի, տա էն դա̈ռվուչին, օր ուր անուն ի տալի: նօքա̈րը տանէլի տալի «յա մահմուդ» կանչօղ դա̈ռվուչին: դա̈ռվուչն առնէլի լա̈նգա̈ռին, փըլավն իրէսիէն ուտէլի, կըշտանալի, մընացած տակինը տալի մէկէլ դա̈ռվուչին, օր ուտի...

մընալի մէկէլ օրը չահ աաասը տըսնալի, օր էն «յա մահմուդ» կանչօղ դա̈ռվուչը կօ էլը կանչէլօվ չուռ ի իկա̈լի:

կանչէլի տալի դա̈ռվուչին, խառցուցէլի.—դա̈ռվու՛չ, էրէկ փըլավն ստացա՞ր...

—ստացամ, Թաքավուօրն ապրաց կէնա:

—ի՞նչ ա̈րիր:

—վըրայէն յիէս կէրամ, կըշտացամ, մընացածը տըվիմ ինգէ-րիս...

—բա̈լի,—ասէլի չահ աբ̄ասը,—վէրմասըն մա̈հբուբ, նէյնասըն մահմուդ[22]...

20 Գիտական տառադարձման մեջ մեծատառեր կիրառելի չեն:

21 Հեքիաթի գիտական տառադարձումը կատարել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Ժաննա Միքայել-յանը, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

22 Թե չտա Աստված, ի՞նչ անի արքան (Ծ.Բ.):